ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի (ԱԻ) նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում 2014 թ. նոյեմբերի 14-ին ԱԻ երիտասարդ արվեստաբանների խորհուրդը (նախագահ՝ արվեստագիտ. թեկնածու Մերի Կիրակոսյան, տեղակալ՝ արվեստագիտ. թեկնածու Լիլիթ Արտեմյան) գումարեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական իններորդ նստաշրջանը:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին ինչպես ԱԻ, ՀՀ գիտակրթամշակութային այլ օջախների՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ), Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնի (ԲԱԿԿ), այնպես էլ Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) քաղաքացիներ, մասնակիցներ Ավստրիայից, Ֆրանսիայից:

Բացման խոսքով հանդես եկավ ԱԻ տնօրեն, արվեստագիտ. դոկտոր Արարատ Աղասյանը. «Գիտաժողովի մասնակիցները ներկայացնում են ոչ միայն Արվեստի ինստիտուտը, այլև մայրաքաղաքի գիտակրթական օջախները: Գիտենք, որ դժվարություններ կան գիտական հիմնարկների աշխատողների շրջանում, այնուամենայնիվ, այսօր ունենք հուսալի ներուժ, հուսալի հերթափոխ, որոնք պետք է շարունակեն ավագ և միջին սերնդի արվեստաբանների գործը: Կարևոր է, որ երիտասարդ հեղինակներն իրենց ուսումնասիրությունների արդյունքները հնչեցնում են ակադեմիական ամբիոնից»:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադ. Ռադիկ Մարտիրոսյանը ողջույնի խոսքում մասնակիցներին մաղթեց անցնել «փայլուն ճանապարհ»: Նա նկատեց, որ մեզանում արվեստաբանության դպրոցը միշտ էլ ունեցել է բարձր մակարդակ: «Եթե արվեստի տարբեր բնագավառներում չունենայինք փայլուն անհատներ, որոնք մեր արվեստը ներկայացրել են ամբողջ աշխարհում, ապա դրանց մեկնաբանությունը իր հետքը չէր թողնի մեր գիտական հաստատություններում»: Նա վստահություն հայտնեց, որ այսօրվա երիտասարդ գիտնականները վաղվա միջին սերնդի շարքերը լրացնողներն են:

ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ, բան. գիտ. դոկտոր Լիլիթ Արզումանյանը մասնավորապես ասաց. «Գիտությունը պահանջում է նվիրում երկրին, մեծ ակնածանք ու պատասխանատվություն, դրանք հատկանիշներ են, որոնք զարգանում են տարիների ընթացքում: Այս գիտաժողովը գալիս է ապացուցելու, որ Արվեստի ինստիտուտն ունի շատ հստակ քաղաքականություն՝ երիտասարդներին ներգրավելու գիտության բնագավառում: Ես վստահ եմ, որ դա տալու է ցանկալի արդյունք»:

ԱԻ փոխտնօրեն, արվեստագիտ. դոկտոր Աննա Ասատրյանը ներկայացրեց երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահ, արվեստագիտ. թեկնածու Մերի Կիրակոսյանի՝ վերջերս լույս տեսած «Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը» ուսումնասիրությունը, որը հրատարակվել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հովանավորությամբ իրականացվող՝ երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակում, ՀՀ գիտահրատարակչական խորհրդի և ԱԻ գիտական խորհրդի որոշմամբ:

Նստաշրջանի երեք նիստերի ընթացքում ընթերցված զեկուցումները (թվով՝ 31) վերաբերում էին արվեստի տարբեր գիտաճյուղերին՝ երաժշտագիտություն, կերպարվեստագիտություն, թատերագիտություն, ճարտարապետության պատմություն և կինոգիտություն:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ: «Երևան» ամսագրի շապիկներն ու նկարազարդում-ները» բանախոսության մեջ ԱԻ կերպարվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտ. թեկնածու Արտավազդ Եղիազարյանը ներկայացրեց 2011-ից լույս ընծայվող ամսագրի պատկերազարդումների հետաքրքիր օրինակները, շապիկների ակտիվ կիրառությունը: ԱԻ ասպիրանտ, ԻԻՀ քաղաքացի Զահրա Մալեքին (գիտ. ղեկ.՝ Ա. Աղասյան) անդրադարձավ Ռումիի պոեզիայի արտացոլմանը պարսիկ ժամանակակից նկարիչ Շահրիար Ահմադիի արվեստում: «Մարիամի և Եղիսաբեթի հանդիպումը» մանրանկարն Ավագ Ծաղկոցի արվեստում (պատկերագրություն և իմաստաբանություն)» զեկույցում ԵՊՀ հայցորդ Լուսինե Սարգսյանը (գիտ. ղեկ.՝ Լ. Չուգասզյան), քննելով XIV դ. հայ մանրանկարիչ Ավագ Ծաղկոցի արվեստի պատկերագրական որոշ առանձնահատկությունները, տվեց թեմայի իմաստաբանական մեկնաբանություններ: Խորհրդային Հայաստանի մոնումենտալ նկարչության զարգացման գործում կարևոր ներդրում ունեցող, մայրաքաղաքի մի շարք շինությունների խճանկարների հեղինակ Կարապետ Եղիազարյանի արվեստի մասին խոսեց ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ Սյուզաննա Գրիգորյանը (գիտ. ղեկ.՝ Հ. Հակոբյան): ԵՊՀ դասախոս, արվեստագիտ. թեկնածու Հռիփսիմե Վարդանյանը ներկայացրեց XX դ. գեղանկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի

«Կերպափոխություններ» շրջանի՝ աստվածաշնչյան մոտիվներով աշխատանքները, որտեղ արտահայտվում է կերպարների երկմիասնությունը: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ Սոֆյա Սարյանի (գիտ. ղեկ.՝ Ա. Ավագյան) «Ռուսական մշակույթի գործիչները Մարտիրոս Սարյանի դիմանկարային արվեստում» բանախոսությունը նվիրված էր Սարյանի վրձնին պատկանող՝ խորհրդային ժամանակաշրջանի մտավորականության ականավոր ներկայացուցիչների դիմանկարների վերլուծությանը: «Ավետարանիչների դիմանկարները Մոմիկի նկարազարդած 1292 թվականի Ավետարանում» զեկուցման մեջ ԵՊՀ հայցորդ Ինեսա Դանիելյանը (գիտ. ղեկ.՝ Լ. Չուգասզյան), քննելով նշված Ավետարանում Մարկոս ավետարանչի և Պրոխորոնի դիմանկարների յուրահատուկ պատկերագրությունը, նշեց, որ Մարկոսի դիմանկարը կրում է Կիլիկիայի նկարիչ Թեոդորոսի (XII դ.) Ավետարանի մանրանկարի ազդեցությունը: ՄՄ գիտաշխատող, արվեստագիտ. թեկնածու Դավիթ Ղազարյանը ներկայացրեց հալեպաբնակ Կարո և Թամար Նարբեկյանների մասնավոր հավաքածուում 2012-ին հանգրվանած ժապավենաձև հմայիլի գեղարվեստական հարդարանքը, որի մեջ առկա են նման հմայիլներում հազվադեպ հանդիպող պատվիրատուի և գրիչ-մանրանկարչի պատկերները: «Տիգրան Մեծի դրամների վրա պատկերված Տիխե աստվածուհու կերպարի շուրջ» զեկույցում ԱԻ կերպարվեստի բաժնի ասպիրանտ Մարիա Լազարևան անդրադարձավ Տիխե աստվածուհու կերպարի և գործառույթների՝ Անահիտ դիցուհու պաշտամունքի հետ աղերսին: ԵՊՀ ասպիրանտ Դիանա Գրիգորյանը (գիտ. ղեկ.՝ Ս. Մանուկյան) «Անիի Բագրատունիների շրջանի եկեղեցիների արծվաքանդակները. պատկերագրական և խորհրդանշական առանձնահատկությունները» բանախոսության մեջ կարևորեց արծվի քանդակների խորհրդաբանության ուսումնասիրությունը՝ զուգահեռներ անցկացնելով Անիի արծվաքանդակների և բյուզանդական քանդակի պատկերագրության միջև: Արվեստագիտ. թեկնածու Շուշանիկ Զոհրաբյանի (Ֆրանսիա) բանախոսությունը նվիրված էր Վարդգես Սուրենյանցի «Լքյալը» պատկերին՝ ռուսական ու եվրոպական արվեստի համատեքստում:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ: «Գագիկ Հովունց. 12 պրելյուդ դաշնամուրի համար» բանախոսությամբ հանդես եկավ ԵՊԿ ասպիրանտ Անահիտ Մարգարյանը (գիտ. ղեկ.՝ Ա. Ասատրյան): ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Լիլիթ Արտեմյանի «Լևոն Չաուշյանի «Էպիկենտրոն» պիեսի կատարողական խնդիրները» զեկույցը վերաբերում էր այդ ստեղծագործության տեխնիկական հիմքերի առանձնահատկություններին՝ կատարողական տեսանկյունից գեղարվեստական գաղափարը ներկայացնելու նպատակով: XIX դ. հայ

երաժշտագիտության մեջ ձայնեղանակի ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունքներին էր նվիրված ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտ. թեկնածու Գայանե Ամիրաղյանի զեկուցումը: «Ռոբերտ Կարապետյանց. Կոնցերտ կոնտրաբասի և դաշնամուրի համար» բանախոսության մեջ ԵՊԿ ասպիրանտ Սարգիս Բալբաբյանը (գիտ. ղեկ.՝Ն. Ավետիսյան), համադրելով երաժշտական տեքստի կատարողական և տեսական վերլուծությունները, նշեց Կոնցերտի երեք մասերի կատարման ժամանակ առաջացող դժվարությունները հաղթահարելու ուղիները: ԵՊԿ հայցորդ Սոֆյա Ղազարյանը (գիտ. ղեկ.՝Ի. Զոլոտովա) ներկայացրեց դաշնամուրային սոնատինա ժանրի բնութագիրը և հայ կոմպոզիտորների՝ Ա. Խաչատրյանի, Ա. Հարությունյանի, Տ. Մանսուրյանի դաշնամուրային սոնատինաների առանձնահատկություններն ու նորարարությունները: Արվեստագիտ. թեկնածու Տաթևիկ Շախկուլյանի (Ավստրիա) զեկուցումը Կոմիտասի «Տանդո» խմբերգի կառուցվածքային առանձնահատկությունների մասին էր: ԵՊԿ ասպիրանտ Դավիթ Մելքոնյանը (գիտ. ղեկ.՝Ա. Ասատրյան) ներկայացրեց «Կոմիտասը իր նամակների հայելիում» բանախոսությունը:

ԹԱՏՐՈՆ ԵՎ ԿԻՆՈ: ԱԻ թատրոնի բաժնի կրտսեր գիտաշխատող Անուշ Ասլիբեկյանը (գիտ. ղեկ.՝Հ. Հովհաննիսյան) անդրադարձավ հայ բեմում Վ. Սարոյանի արձակի բեմադրության փորձերին, ինչպես նաև Վ. Սարոյանի արձակ ստեղծագործությունների բեմական պատմությանը, առաջադրեց արձակագրի բեմադրության հետ կապված արդիական հարցադրումներ: «Վ. Շեքսպիրի «Միջամառային գիշերվա երազ» պիեսը Պ. Ֆազլյանի բեմադրությամբ» բանախոսության մեջ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող Լուսինե Նուրազյանը (գիտ. ղեկ.՝Հ. Հովհաննիսյան) անդրադարձավ 1967 թ. լիբանանահայ հանդիսատեսին առաջին անգամ ներկայացված՝ ճանաչված բեմադրիչ Պ. Ֆազլյանի վերոնշյալ պիեսի բեմադրությանը: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտ. թեկնածու Արսեն Համբարձումովը «Ամոս Գիտայի «Անա Արաբիա» ֆիլմի մասին և մեկ անգամ ևս կինոարվեստում փաստարկման մասին» զեկուցման մեջ ներկայացրեց փաստարկման տեսությունը՝ կապված ֆիլմի վերլուծության հետ և դիտարկեց հաջորդականությունը գործողության զարգացման մեջ:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԱՐՎԵՍՏ: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտ. թեկնածու Մարտին Հարությունյանը «Կիպրոսի՝ Սուրբ Մակարավանք. անցյալն ու ներկան» զեկույցում խոսեց քչերին հայտնի վանքի ներկա վիճակի, ճարտարապետական տեսքի մասին և ներկայացրեց Սուրբ Մակարավանքի համառոտ

պատմությունը: ԲԱԿԿ աշխատակից Իրինա Գարասեֆերյանի բանախոսությունը վերաբերում էր ֆրանսահայ նկարիչ Լևոն Թութունջյանի և ֆրանսիացի հրատարակիչ Լեոնս Ռոզենբերգի 1933 թ. նամակագրությանը: Նիկոլ Գալանտերյանի «Փարվանա» օպերայի մասին էր ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող Լիլիթ Հակոբյանի (գիտ. ղեկ.՝ Ա. Ասատրյան) զեկուցումը: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ Մարտուն Կոստանդյանի (գիտ. ղեկ.՝ Ա. Ասատրյան) բանախոսությունը նվիրված էր Տ. Չուխաճյանի սիմֆոնիկ ստեղծագործությանը՝ մասնավորապես «Fantaisie orientale»-ին: «Դավիթ Հալաջյանի «Միրո և մահվան երգեր» ըստ Ռուբեն Սևակի» շարքը ԱԻ երաժշտության բաժնի հայցորդ Արմինե Աթոյանի քննության թեման էր (գիտ. ղեկ.՝ Կ. Ջաղացպանյան): ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ Սոնա Մակարյանը (գիտ. ղեկ.՝ Ա. Ասատրյան) հանդես եկավ «Պ. Լիսիցյանը՝ կամերային երգիչ» զեկուցումով:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ: ԱԻ ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտարապետ. թեկնածու Արեգ Հասրաթյանն արծարծեց Գեղարքունիքի մարզում գտնվող, VII դարում կառուցված Դրմաշենի Սբ. Թադևոս եկեղեցու վերակազմության հարցը, փորձեց վերականգնել հուշարձանի նախնական հորինվածքը: «Եղեգիսի Զորաց եկեղեցի. ճարտարապետական նոր հետազոտություններ» զեկուցման մեջ ՃՇՀԱՀ հուշարձանների չափագրության և ախտորոշման լաբորատորիայի վարիչ, ճարտարապետ. թեկնածու Դավիթ Նահատակյանն անդրադարձավ եկեղեցու ուսումնասիրությանը, կատարեց համաչափական վերլուծություններ և երեք եկեղեցիների քննությամբ փորձեց հիմնավորել Եղեգիս եկեղեցու «Զորաց» կոչվելու վարկածը: ԱԻ ճարտարապետության բաժնի ասպիրանտ, ԻԻՀ քաղաքացի Արման Լուկասի (գիտ. ղեկ.՝ Դ. Քերթմենջյան) բանախոսությունը վերաբերում էր Նոր Ջուղայի առանձնատների գմբեթի կառուցվածքին: «Լալեհզար փողոցի թատերական շենքերը» զեկուցման մեջ ԱԻ ճարտարապետության բաժնի ասպիրանտ, ԻԻՀ քաղաքացի, Սառա Մալեք Մոհամմադին (գիտ. ղեկ.՝ Դ. Քերթմենջյան), դիտարկեց իրանական ճարտարապետության մեջ ուրույն տեղ ունեցող այդ շենքերի մշակութային արժեքը, ներկայացրեց դրանց ստեղծման պատմությունը:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը:

Նստաշրջանն անցավ եռանդուն քննարկումների և հետաքրքիր, կառուցողական հարցադրումների մթնոլորտում: Նշենք, որ առաջիկայում զեկուցումները կհրատարակվեն գիտական ժողովածուի տեսքով:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ. Ա.